ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«31» Դեկտեմբեր 2021թ. № 02/07.3/2342-2021

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ 22/4
m-bi-r@mail.ru

Հարգելի՛ պարոն Բաղդասարյան,

Հայտնում ենք Ձեզ, որ Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի միջև 22.02.2021թ-ին կնքված թիվ ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/22 ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն չի կատարել ստանձնած պարտավորությունները: Մասնավորապես, Նախարարության Կողմից 04.03.2021թ. թիվ 21-2, 10.03.2021թ. թիվ 21-5, 16.03.2021թ. թիվ 21-7 և 30.03.2021թ. թիվ 21-14 հայտերով ներկայացված ծառայությունները չեն մատուցվել: Նախարարությունը գրությամբ ծանուցել է «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ին, որին ի պատասխան «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն ներկայացրել է պարզաբանում, որը փաստաթղթերով չի հիմնավորել և հայտերով ներկայացված ծառայությունները հետագայում ևս չի մատուցել: Համաձայն պայմանագրի 2.1.3 կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է Պայմանագիրը:

«Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ կետը՝ Նախարարությունը միակողմանի լուծում է ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/22 ծածկագրով Պայմանագիրը:

Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրեր՝ Հավելված 4.1 և Հավելված 5.1), համաձայն որակավորման ապահովման 1.4 կետի և պայմանագրի ապահովման 1.6 կետի, կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվի «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ ՀՀ ՖՆ գործառնական վարչության N900008000698 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակվելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Invalid signature

X

ՎԱՀԱԳՆ ՕՀԱՆՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: OHANYAN VAHAGN 2002810192

ՎԱՀԱԳՆ ՕՀԱՆՅԱՆ

Կատարող՝ Շենքերի, շինությունների
պահպանման և տնտեսական վարչության
գնումների կազմակերպման բաժին
Հեռ՝. 012 31 77 22